Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, ռուսաց լեզվի (26 դասաժամ), ֆրանսերենի (18 դասաժամ), աշխարհագրության (7 դասաժամ), ֆիզկուլտուրայի (12 դասաժամ), ինֆորմատիկա (3 դասաժամ), Ֆիզիկայի (8 դասաժամ), մաթեմատիկայի (31 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (12 դասաժամ), ՆԶՊ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ զինված ուժերի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են հունվարի 29-ից մինչև փետրվարի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի փետրվարի 14-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Բարձրավանի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գորիս համայնք, գ. Բարձրավան, Բարձրավանի միջնակարգ դպրոց:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 322685, հեռախոսահամարով: